ISSN 1829 - 0043 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ (ՀՃԱԼ). 2016. Հ.13, N 1

ՀՏԴ 330.42 ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ժ.Ս. Մխիթարյան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԻՐՈՒՅԹԸ*

Առաջին անգամ ներկայացվում է «Սահմանադրականության տնտեսագիտության» հետազոտության առարկան, նրա էությունը, գաղափարական հիմնասյուները, տեսական նախահիմքերը, հետազոտական հիմնական ուղղությունները և մեթոդաբանական գործիքակազմը: Առարկայական այս տիրույթում հնարավոր կլինի ստանալ սահմանադրականության մակարդակի գնահատականը և ուղղորդել ջանքերը դրա բարձրացման ուղղությամբ:

Առանցքային բառեր. *սահմանադրականություն, տնտեսագիտություն, գնահատում:*

Ներածություն: Առաջին անգամ ներկայացվում են Սահմանադրականության տնտեսագիտության հետազոտական տիրույթը կազմավորող հիմնադրույթները, որոնք կրում են հիմնարկեքային բնույթ:

Սահմանադրականության տնտեսագիտությունը գիտահետազոտական նոր ուղղություն է, որի ձևավորումը լավագույնս տեղակայվում է տնտեսագիտության շուրջ երկուսուկեսդարյա էվոլյուցիոն շարժընթացի համատեքստում:

«Տնտեսական գիտությունը» համակարգվածորեն առաջին անգամ գիտական ասպարեզ մուտք գործեց դասական քաղաքատնտեսության տեսքով: Վերջինս իր ժամանակաշրջանի միակ զատորոշվող հասարակական գիտությունն էր: Դասականների մեծամասնությունը դիտարկում էին տնտեսությունը, որպես իր հասարակական և պատմական առավել լայն միջավայրի բաղադրամաս, իսկ դասական քաղաքատնտեսությունը՝ որպես միացյալ հասարակական գիտություն՝ այդ գիտական լայն տարածության ծածկման համար:

1860-70-ականներին դասական քաղաքատնտեսությունը հայտնվեց խորը ճգնաժամի մեջ: Միլի կողմից ռիկարդոյականության ավանդույթների հանրահռչակման շուրջ ձևավորված փոխզիջումը չքացավ: Ձևավորվեցին դասական դպրոցի երեք հիմնական քննադատներ. մարքսիզմը, պատմական դպրոցն ու մարժինալիզմը: Մարքսն առաջարկում էր ռիկարդոյական տնտեսագիտության քննադատական վերակառուցում՝ որպես իր քննադատության անկյունաքար ընդունելով Ռիկարդոյի հիմնական տեսական գործիքը՝ արժեքի աշխատանքային տեսությունը: Մինչդեռ այն ամբողջությամբ լքվեց պատմական դպրոցի ու մարժինալիզմի կողմից: Մյուս կողմից, վերջիններիս միջև ևս առկա էր խորը հակասություն. եթե պատմական դպրոցի ներկայացուցիչները գտնում էին, որ դասական քաղաքատնտեսության հիմնախնդիրների հիմնարար պատճառներից մեկը Ռիկարդոյի վերացական դեդուկտիվիզմն էր, ապա մարժինալիստները դիտարկում էին այն, որպես ամենապատշաճ գործիք, որը սակայն լրամշակման կարիք ուներ, ինչը պետք է իրագործվեր սմիթյան ինդիվիդուալիզմով և բենթամյան յութիլիթարիզմով: Ի վերջո հաղթանակեց մարժինալիզմը. տեղի ունեցավ մարժինալիստական հեղափոխությունը, որի համատեքստում հիմնադրվեց տնտեսագիտությունը (էկոնոմիքսը), որպես անկախ գիտաճյուղ, և ձևավորվեց տնտեսագիտության նորդասական դպրոցը: Վերջինիս հիմնարար բնութագրականը հանդիսացավ եռակի ռեդուկցիոնիզմը, որը շարունակում է մնալ տնտեսագիտության հիմքերում մինչ օրս. ա) առաջինն *անհատական ռեդուկցիոնիզմն* էր, որի համաձայն վերլուծական հիմնական միավորն անհատն է (մեթոդաբանական ինդիվիդուալիզմ), և տնտեսությունը դիտարկվում է, որպես իր անհատական տարրերի համախմբություն: Ընդ որում, վերլուծության կենտրոնն ոչ միայն տեղաշարժվեց դեպի անհատը, այլև օպտիմալացման վարքագիծ դրսևորող ռացիոնալ անհատը, ով առավելացնում է իր օգտակարությունը, բ) երկրորդն *ապահասարակական ռեդուկցիոնիզմն* էր, որի համատեքստում տնտեսությունը նվազեցվում է շուկայական առաջարկում և պահանջարկում՝ վերացարկվելով հասարակական այլ գործոններից՝ ենթադրելով, որ շուկայական հարաբերությունները կարող են տիրել հասարակական առավել լայն համատեքստից անկախ, գ) երրորդն *ապապատմական*

ռեդուկցիոնիզմն էր, որի համատեքստում պատմական որոշակիությունը կորսվում է, և տնտեսական գիտությունն ամբողջությամբ բաժանվում է պատմությունից:

Այս զարգացումների հորձանուտում տեղի ունեցավ պարադոքսալ երևույթ: Մարժինալիստական հեղափոխությունը հանգեցրեց երկու զուգահեռ և հակասական զարգացումների տնտեսագիտության շրջանակներում: Մի կողմից կիրառության շրջանակները նվազեցվեցին դեպի պարզապես, որպես շուկայական հարաբերություններ հանդիսացող տնտեսությունը, երբ մյուս կողմից տնտեսագիտական հիմնական հայեցակարգային սկզբունքները (հատկապես՝ ռացիոնալության) դարձան ավելի ու ավելի ունիվերսալ իրենց բովանդակությամբ և կիրառությամբ: Տնտեսագիտության գործիքակազմի ունիվերսալության և կիրառության շրջանակների սահմանափակության միջև լարվածության պայմաններում պատահական չէր, որ գիտաճյուղի սահմանները ձգվեցին զուտ շուկայի հետազոտությունից այն կողմ՝ մեծ հաջողությամբ կիրառվելով, ինչպես տնտեսական, այնպես էլ ոչ տնտեսական՝ հասարակական այլ գիտությունների հետազոտության տիրույթում գտնվող հիմնահարցերի հանդեպ: Այդ միտումը ստացավ «տնտեսագիտական կայսերապաշտություն» անվանումը [1,2]:

Այս համատեքստում ձևավորվեցին և շարունակում են ձևավորվել գիտահետազոտական բազմաթիվ նոր ուղղություններ: Այսպես, տնտեսագիտության և իրավագիտության հատույթում՝ իրավունքի տնտեսագիտությունն ու սահմանադրական տնտեսագիտությունը, քաղաքագիտության՝ հանրային ընտրության տեսությունը, հոգեբանության՝ վարքագծային տնտեսագիտությունը, պատմության՝ տնտեսական պատմությունը և կլիմատրիկան, աշխարհագրության՝ տնտեսական աշխարհագրությունը, սոցիոլոգիայի՝ տնտեսական սոցիոլոգիան, երկրաբանության՝ տնտեսական երկրաբանությունը, ֆիզիկայի՝ էկոնոֆիզիկան, լեզվաբանության՝ լեզվի տնտեսագիտությունը, կրոնի՝ կրոնի տնտեսագիտությունը, մարդաբանության՝ տնտեսական մարդաբանությունը: Այս շարքը շարունակում են ընտանիքի տնտեսագիտությունը, կենսաբազմազանության տնտեսագիտությունը, շրջակա միջավայրի տնտեսագիտությունը, էկոլոգիական տնտեսագիտությունը, բիոլոգիական տնտեսագիտությունը, գեոէկոնոմիկան, մշակութային տնտեսագիտությունը, կրթության տնտեսագիտությունը, առողջապահության տնտեսագիտությունը, պաշտպանության տնտեսագիտությունը, խաղաղության տնտեսագիտությունը, նեյրոէկոնոմիկան, հաշվողական տնտեսագիտությունը, անձնակազմի տնտեսագիտությունը, հեռահաղորդակցության տնտեսագիտությունը, տրանսպորտի տնտեսագիտությունը, թվայնացման տնտեսագիտությունը, ցանցային տնտեսագիտությունը, հոգեֆիզիոլոգիական տնտեսագիտությունը և այլն:

1. Սահմանադրականության տնտեսագիտության հասկացութային շրջանակները: Վերոբերյալ ցանկը կարող է լրացվել ևս մեկ անվամբ՝ «սահմանադրականության տնտեսագիտությամբ»: Առաջարկում եմ հետևյալ բնորոշումը. ***«Սահմանադրականության տնտեսագիտությունը գիտահետազոտական նոր ուղղություն է, որն ուսումնասիրում է երկրում սահմանադրականության մակարդակի առավելացման հիմնահարցերը՝ սահմանադրականության գնահատման, մշտադիտարկման և կառավարման շարունակական գործընթացների իրականացման ճանապարհով»:***

Սահմանադրականության տնտեսագիտության հետազոտության կենտրոնական առարկան **սահմանադրականությունն** է, որը *զարգացման մակարդակ է, երբ սահման է դրված պետական իշխանության կամայականության հանդեպ՝ այն սահմանափակված է մարդու իրավունքներով և իշխանական թևերի բաժանման մեխանիզմով, երբ պետական իշխանությունը գործում է արդյունավետորեն՝ ծառայելով քաղաքացիների բարեկեցության բարձրացման վերջնանպատակին, երբ սահմանադրական հիմնարար սկզբունքներն ու նորմերն իրացված են իրական կյանքում:* Առաջադրված սահմանումից բխում է խնդրո առարկա հասկացության կառուցվածքը՝ որպես իր երկու չափումների (մարդու իրավունքներ ու պետաիշխանական համակարգ) և երկու առումների (բացասական ու դրական) հատութային բաղադրատարրերի ամբողջություն [3]:

2. Սահմանադրականության տնտեսագիտության գաղափարական հիմնասյունները: Սահմանադրականության տնտեսագիտությունը «տնտեսագիտական մոտեցման» կիրառությունն է սահմանադրականության հանդեպ: Հիշյալ մոտեցումը, ինչպես նշվեց, հաջողությամբ կիրառվել է ավանդաբար ոչտնտեսագիտական բազմաթիվ տիրույթների հանդեպ՝ հանգեցնելով գիտահետազոտական բազմաթիվ նոր ուղղությունների առաջացման, իսկ այդ միտումը ստացել է «տնտեսագիտական կայսերապաշտություն» անվանումը: Տնտեսագիտական մոտեցման առանցքը կազմում են երկու

հիմնարարներ՝ մեթոդաբանական ինդիվիդուալիզմն ու ռացիոնալության սկզբունքը (որը պայմանավորում է առավելացման վարքագծի դրսևորումը): Այսպես, տնտեսագիտական մոտեցմամբ սպառողը դիտարկվում է, որպես ռացիոնալ էակ, ով առավելացնում է իր օգտակարությունը, կազմակերպությունը դիտարկվում է, որպես ռացիոնալ միավոր, որն առավելացնում է իր շահույթը և այլն: *Առաջարկվում է տնտեսագիտական մոտեցումը կիրառել պետության, որպես ռացիոնալ անհատների (քաղաքացիների) և ռացիոնալ պետաիշխանական ինստիտուտների ամբողջության հանդեպ, որը պետք է ձգտի առավելացնել սահմանադրականությունը:*

Վերջին պնդումը մարմնավորում է ռացիոնալության սկզբունքը և առավելացման նպատակը: Առավել բարդ խնդիր է մեթոդաբանական ինդիվիդուալիզմի սկզբունքի էնդոգենացումը: Ինչպես նշվեց, սահմանադրականությունը բաղկացած է երկու չափումներից. առաջինը վերաբերում է մարդու իրավունքներին, երկրորդը՝ պետաիշխանական համակարգին: Մեթոդաբանական ինդիվիդուալիզմի դասական բնորոշման համաձայն, հետազոտության սուբյեկտն անհատներն են: Այդպիսով, սահմանադրականության առաջին չափումը լիովին բավարարում է մեթոդաբանական ինդիվիդուալիզմի դասական բնորոշմանը: Ինչ վերաբերում է պետաիշխանական համակարգին, որն իրենից ներկայացնում է պետաիշխանական ինստիտուտների ամբողջություն, ապա պետք է նշել, որ այն ևս բավարարում է մեթոդաբանական ինդիվիդուալիզմի սկզբունքին՝ ժամանակակից տնտեսագիտության պատկերացումների համաձայն: Դա փոխկապված է ինստիտուցիոնալ տնտեսագիտության զարգացման հետ, որն իր հաստատուն տեղն է գրավել գիտական շրջանակներում: Վերջինիս գլխավոր նվաճումն ամփոփվում է “Institutions matter” արտահայտությամբ՝ «ինստիտուտները նշանակություն ունեն»: Ժամանակակից տնտեսագիտության համատեքստում ինստիտուտների նշանակությունն անհերքելի է, իսկ ծայրահեղ ազատականության դրսևորումները, համաձայն որոնց հետազոտության *միակ* սուբյեկտն ու ելակետն անհատներն են, հետին պլան են մղվել:

Այս փոփոխությունների համատեքստում, բնական էր ակնկալել, որ համապատասխան էվոլյուցիա կապրի նաև մեթոդաբանական ինդիվիդուալիզմ հասկացությունը, ինչն էլ և տեղի ունեցավ: Ներկայումս տարբերում են մեթոդաբանական ինդիվիդուալիզմի հետևյալ տեսակները.

1. *Բնական ինդիվիդուալիզմ I.* ելակետը բնական (ապահասարակական) անհատն է, ով ապրում է առանց հասարակական ինստիտուտների (ըստ հասարակական պայմանագրի տեսության),
2. *Բնական ինդիվիդուալիզմ II.* ելակետը մեկուսացված անհատն է, ով առանց հասարակական հարաբերությունների փոխազդում է շուկայում՝ հասարակական ինստիտուտների և տեխնոլոգիաների բացակայության պայմաններում (ըստ Վալրասի ընդհանուր հավասարակշռության տեսության),
3. *Հասարակական ինդիվիդուալիզմ.* ելակետը կրկին մեկուսացված անհատն է, բայց նա դիտարկվում է, որպես հասարակական կամ մշակութային էակ, իսկ հասարակությունը՝ որպես միջսուբյեկտիվային իրողություն (ըստ ավստրիական դպրոցի),
4. *Ինստիտուցիոնալ ինդիվիդուալիզմ.* օբյեկտիվորեն գոյություն ունեցող հասարակական ինստիտուտներն ընդունվում են, որպես բացատրող փոփոխականներ, որպես գործողության օբյեկտիվ սահմանափակումներ (ըստ Պոպերի),
5. *Կառուցվածքային ինդիվիդուալիզմ.* ընդունում է հասարակական ամբողջությունները՝ որպես փոխկապակցված դիրքերի կառուցվածք, որոնք գոյություն ունեն այդ դիրքերը զբաղեցնող մասնավոր անհատներից անկախ (ըստ Քոլմանի): Որպես առավել հոլիստիկ տեսակ, կիրառելի է հատկապես սոցիոլոգիայում:

Վերոնշյալ տեսակները դասակարգվում են երկու խմբի՝ ուժեղ (1-3) և թույլ (4-5) մեթոդաբանական ինդիվիդուալիզմի: Էվոլյուցիոն զարգացումը տեղի է ունեցել ուժեղից դեպի թույլ ուղղվածությամբ [4]:

Այսպիսով, սահմանադրականության երկրորդ չափման՝ պետաիշխանական ինստիտուտների ամբողջության պարագայում, մեթոդաբանական ինդիվիդուալիզմի սկզբունքի էնդոգենացումը տեղի կունենա դրա ինստիտուցիոնալ ինդիվիդուալիզմի նշանակությամբ: Ուստի սահմանադրականության տնտեսագիտության գաղափարական այս հիմնասյունը կհենվի դասական և ինստիտուցիոնալ ինդիվիդուալիզմների դիալեկտիկական միասնության վրա:

3. Սահմանադրականության տնտեսագիտության տեսական նախահիմքերը: Սահմանադրականության տնտեսագիտությունը սերում է դասական քաղաքատնտեսության, նորդասական տնտեսագիտության (միկրոտնտեսագիտության) և ինստիտուցիոնալ տնտեսագիտության միացյալ ակունքներից: Դասական քաղաքատնտեսությունը տնտեսագիտական վերլուծության առարկա էր դարձնում ոչ միայն զուտ շուկայական և նեղ տնտեսական տարակարգերը, այլև՝ հասարակական առավել լայն համատեքստին առնչվող հիմնահարցերը, որոնց շարքում իր կարևոր տեղը կարող է զբաղեցնել նաև սահմանադրականությունը: Նորդասական տնտեսագիտությունը տրամադրում է մեթոդաբանական ինդիվիդուալիզմի և ռացիոնալության հիմնարար սկզբունքները, որոնք թույլ են տալիս տնտեսագիտական մոտեցումը կիրառել սահմանադրականության հանդեպ, իսկ ինստիտուցիոնալ տնտեսագիտությունը անհրաժեշտ հիմքերն է տրամադրում ինստիտուտների էնդոգենացման համար, մասնավորապես թույլ տալով էնդոգենացնել պետահիշխանական ինստիտուտները:

4. Սահմանադրականության տնտեսագիտության հետազոտական հիմնական ուղղությունները: Վերջիններս երեքն են՝ սահմանադրականության գնահատման, մշտադիտարկման և կառավարման հետազոտությունները.

Ա. Սահմանադրականության գնահատումը միտված է սահմանադրականության մակարդակի, ինչպես նաև այն կազմավորող բաղադրատարրերի քանակական չափման ստացմանը:

Քանի որ սահմանադրականությունը խիստ բազմաչափ և բազմաձև հասկացություն է, ուստի դրա գնահատումը միաչափ հարթությունում՝ որևէ անհատական ցուցչի մակարդակում անհնար է: Այս խնդիրն իրագործելի է բացառապես բաղադրյալ ցուցչի՝ *«Սահմանադրականության համաթվի»* կառուցման ճանապարհով: Առաջարկվում է սահմանադրականության համաթվի կառուցման և ըստ այդմ՝ սահմանադրականության մակարդակի գնահատման հետևյալ մոդելը [5].

$$\mathrm{IC}_c^* = \max_{w_{qc}, q=1,\dots,Q} \sum_{q=1}^{Q} I_{qc} w_{qc},$$

$$\sum_{q=1}^{Q} I_{qk} w_{qc} \le 1,$$

$$w_{qc} \ge 0,$$

$$\alpha_q \le \frac{I_{qc} w_{qc}}{\sum_{q=1}^{Q} I_{qc} w_{qc}} \le \beta_q,\ \alpha_q, \beta_q \in [0,1],$$

$$\forall c = 1, \dots, M;\ \forall q = 1, \dots, Q,$$

որտեղ՝ I_{qc} –ն՝ q –րդ ցուցչի արժեքն է c –րդ երկրի համար, IC_c –ն (Index of Constitutionalism)՝ համաթվի արժեքը c –րդ երկրի համար, w_{qc} –ն՝ q –րդ ցուցչի կշիռը c –րդ երկրի համար, k –ն՝ հենանիշային երկիրը, IC_c^* – ն՝ համաթվի (առավելագույն) արժեքը c –րդ երկրի համար, օպտիմալ կշիռների պայմաններում, α_q –ն և β_q –ն՝ համաթվի կազմում յուրաքանչյուր ցուցչի մասնաբաժնի ստորին և վերին շեմերը:

Ինչպես տեսնում ենք, առաջին տողում ներկայացված է սահմանադրականության տնտեսագիտության հիմնանպատակը հանդիսացող սահմանադրականության մակարդակի առավելացման նպատակային ֆունկցիան: Ներկայացված մոտեցումը թույլ կտա ստանալ սահմանադրականության մակարդակի գնահատականը, միայն որի հիման վրա հնարավոր կլինի իրականացնել սահմանադրականության մշտադիտարկման և կառավարման գործընթացները:

Բ. Սահմանադրականության մշտադիտարկումը միտված է ժամանակի ընթացքում սահմանադրականության և դրա պակասուրդի մակարդակի փոփոխության միտումների ուսումնասիրմանը և դրանց առաջացմանը նպաստած պատճառների բացահայտմանը,

Գ. Սահմանադրականության կառավարումը միտված է երկրի սահմանադրականության մակարդակի բարձրացմանը՝ շեշտադրելով այն ուղղությունները և դրանց գծով գործողությունները, որոնց կենսագործումը թույլ կտա գործնականում մոտենալ սահմանադրականության առավելացման նպատակային ֆունկցիայի բավարարմանը:

5. Սահմանադրականության տնտեսագիտության մեթոդաբանական գործիքակազմը: Սահմանադրականության տնտեսագիտության հիմնական մեթոդներն են՝ *տնտեսագիտամաթեմատիկական (տնտեսաչափական) մեթոդները*, որոնց նշանակությունը մեծ է

սահմանադրականության գնահատման և կառավարման հետազոտություններում և *համեմատական սահմանադրականության մեթոդը*, որի նշանակությունը մեծ է սահմանադրականության մշտադիտարկման հետազոտություններում: Վերջիններս պետք է իրականացվեն ներերկրային և միջերկրային համեմատական վերլուծությունների ճանապարհով, որոնցից առաջինը պետք է ուղղված լինի երկրի սահմանադրականության մակարդակի և դրան նպաստող գործոնների միտումների վերլուծությանը ժամանակի ընթացքում, իսկ երկրորդը՝ տվյալ երկրի սահմանադրականության մակադակի և դրան նպաստող գործոնների միտումների համեմատությանը այլ երկրների համադրելի ցուցանիշների հետ՝ ինչպես ստատիկ, այնպես էլ՝ դինամիկ համեմատությունների կտրվածքով:

Հենց այդ գործընթացների ամբողջականությունն ու շարունակականության ապահովումն է, որ կարող է դառնալ Հայաստանի Հանրապետության կայուն զարգացման գլխավոր երաշխավորը:

** Սահմանադրականության տնտեսագիտություն» եզրն առաջին անգամ առաջարկվել է հեղինակի կողմից 2015 թ. դեկտեմբերի 2-ին Հայ-ռուսական համալսարանի հոբելյանական X տարեկան գիտաժողովում ներկայացված «Սահմանադրականության տնտեսագիտություն» զեկուցման համատեքստում:*

Գրականություն

1. **Milonakis, D., Fine, B.** “From Political Economy to Economics,” Routledge, 2009.
2. **Milonakis, D., Fine, B.** “From Economics Imperialism to Freakonomics,” Routledge, 2009.
3. **Մխիթարյան Ժ.** «Սահմանադրականության գնահատման հայեցակարգային մոտեցումները», Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի լրաբեր, Հ. 12, N 3, 2015:
4. **Udehn, L.** “Methodological Individualism: Background, history and meaning,” Routledge, 2001.
5. **Մխիթարյան Ժ.** Սահմանադրականության գնահատման մեթոդաբանական մոտեցումները // *Ճարտարապետության և շինարարության ՀԱՀ տեղեկագիր,* N.4, 2015:

07.02.2016.

Ж.С. Мхитарян

ОБЛАСТЬ ЭКОНОМИКИ КОНСТИТУЦИОНАЛИЗМА

В первый раз представляется предмет исследования “Экономики конституционализма”, ее сущность, идеологические основы, теоретические предпосылки, основные направления и методологический инструментарий. В этой области будет возможно получить оценку уровня конституционализма и направить усилия к ее увеличению.

Ключевые слова: *конституционализм, экономика, оценивание.*

Zh.S. Mkhitaryan

THE DOMAIN OF ECONOMICS OF CONSTITUTIONALISM

The subject of study of the “Economics of Constitutionalism”, its essence, ideological foundations, theoretical prerequisites, main directions and methodological tools are presented for the first time. In this domain it will be possible to evaluate the level of constitutionalism and to direct the efforts towards its improvement.

Keywords: *constitutionalism, economics, evaluation.*

Մխիթարյան Ժիրայր Սամվելի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ